

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 31 ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ 25-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Շուրջ 31 տարիներից ի վեր սեպտեմբեր ամսին Մայր Աթոռ են հավաքվում Հայ Եկեղեցու արտասահմանյան ու ներքին թեմերի առաջնորդներ, հոգևոր հայրեր ու հարգարժան հյուրեր՝ ներկա գտնվելու և շնորհավորելու Վեհափառ Հայրապետին՝ իր գահակալության տարեդարձի կապակցությամբ:

Այս տարի նույնպես, դեռևս սեպտեմբերի առաջին կեսից, Մայր Աթոռ էին ժամանել Արգենտինայի, Ռումինիայի ու Բուլղարիայի, Եգիպտոսի, Կենտրոնական Եվրոպայի, Ամերիկահայոց արևմտյան, ինչպես նաև Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Ադրբեջանի հայոց թեմերի սրբազան հայրեր, բազմաթիվ հյուրեր:

Այս առթիվ Մայր Աթոռում էր գտնվում նաև Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը:

Քիչ ավելի ուշ Մայր Աթոռ ժամանեցին նաև Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ ու Հունաստանի թեմի հայրապետական պատվիրակ սրբազան հայրերը:

Նախ սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը՝ բոլոր եպիսկոպոսների մասնակցությամբ, որտեղ քննվեցին Հայ Եկեղեցու կանոնադրության կատարման որոշ հարցեր:

Սեպտեմբերի 27-ին կատարվեց հանդիսավոր «Երեկոյան» ժամերգություն և տրվեց հոգևոր համերգ Մայր Աթոռի երգչախմբի կատարմամբ:

Սեպտեմբերի 28-ին, կիրակի օրը, նշվեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության 31 և Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանի գահակալության 25-ամյակը: Վարագա Խաչի մեծ տոնի առթիվ մատուցվեց ս. պատարագ: Պատարագիչն էր Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը: «Հայր մեր»-ից առաջ ս. խորան բարձրացավ Վեհափառ Հայրապետը և, ջերմ խոսքերով շնորհավորելով պատարագիչ սրբազան Պատրիարքին՝ իր գահակալության 25-ամյակի ու բազմավաստակ գործունեության առթիվ, նրան նվիրեց գեղեցկահյուս մի կոնքեռ՝ ի նշան սիրո և գնահատանքի:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(28 սեպտեմբերի 1986 թ.)

Սիրեցյալ հոգևոր եղբայրներ Մեր, հարգարժան հյուրեր և բարեպաշտ ժողովուրդ:

Մենք գոհություն ենք տալիս Աստծուն, որ Մեզ շնորհում է այս պահը, այս պատմական պահը: Պատմական գոնե ինձ և Մեր սիրեցյալ եղբոր՝ Շնորհք Սրբազան Պատրիարքի համար: Պատմական, որովհետև երեսուն տարիներ առաջ, հենց այստեղ, այս սուրբ սեղանի առաջ, այսօրվա Թուրքիո հայոց Պատրիարքը, այն ատեն՝ վարդապետ, ձեռնադրվեց և օծվեց Մեր ձեռքով եպիսկոպոս Հայաստանյայց Եկեղեցու, երբ Մենք էլ մի շաբաթ առաջ դրանից, Աստուծո ողորմությամբ ընտրվել էինք և օծվել կաթողիկոս Ամենայն Հայոց: Ես հիշում եմ այդ պահը, սիրելի Սրբազան: Ես շատ հուզված էի, երբ իմ բութ մատով մյուռոնն էի քսում Ձեր ճակատին: Հիշում եմ հստակ, որ Դուք նույնպես հուզված էիք: Հոգևոր հուզումի մի ալիք փոխանցվեց ինձանից դեպի Ձեզ և Ձեզանից դեպի ինձ: Այդ պահից առավել ամրացավ, դրոշմվեց հոգևոր եղբայրությունը մեր միջև: Իսկ հինգ տարիներ անց, ուրեմն, 1961 թվականի աշնան, Ստամբուլի հայ եկեղեցական համայնքները Ձեզ ընտրեցին իբրև Պատրիարք Հայոց Թուրքիո՝ կենտրոն ունենալով Ստամբուլ քաղաքը, որտեղ, ինչպես գիտեք, հաստատվել էր Հայոց Պատրիարքությունը ուղիղ 525 տարիներ առաջ, Մեհմեդ Բ սուլթանի Պոլիսը գրավելուց մի քանի տարիներ հետո: Ահա այդ թվականից, ուրեմն ավելի քան հինգ հարյուր տարիներ, կանգուն մնաց և գործեց Հայոց Պատրիարքական Աթոռը, իբրև այն ժամանակվա սուլթանական Թուրքիո բոլոր հայկական եկեղեցիների և համայն հայ հավատացյալների հոգևոր ու ազգային կենտրոն: Եվ ծանոթ է, կարծում եմ, բոլորիդ, թե այս հարյուր տարիների ընթացքում ինչպիսի մեծ դեր կատարեց Պոլսո Պատրիարքական Աթոռը թուրքահայության կյանքում ոչ միայն հոգևոր իմաստով, այլ նաև կրթական, մշակութային և ազգային: Բոլոր հայոց իրագործումները Թուրքիայի, մանավանդ ԺԷ դարուց այս կողմ, ԺԷ—ԺԸ դարերին, հայ կյանքը ծաղկում ու վերածնում ապրեց: Այդ բոլորի պատվանդանը, հիմքը, իրավական և կրոնական իմաստով, հանդիսացավ Հայոց Պատրիարքական Աթոռը:

Ահավասիկ այդ Աթոռի վրա բալմեց 25 տարիներ առաջ այսօրվա Մեր սիրեցյալ եղբայր Պատրիարքը՝ Շնորհք արքեպիսկոպոս, որը քսաննհինգ տարիներ շարունակ՝ իմաստությամբ, համբերատարությամբ, շրջահայեցությամբ և երբեմն քաջությամբ վարեց իր պաշտոնը, արժանանալով սիրույն և գնահատանքին ոչ միայն Թուրքիո հայոց, այլ նաև համայն մեր Եկեղեցվո և համայն մեր հայ ժողովրդի: Մենք երջանիկ ենք այսօր ողջունելու նրան իր գահակալության 25-րդ տարեդարձի առիթով: Մաղթում ենք Մեր սիրեցյալ եղբորը հոգու և մարմնո առողջություն, տոկունություն, որպեսզի նույն համբերատարությամբ, բայց և նույն քաջությամբ, հաղթահարելով ամեն տեսակի դժվարություններ, շարունակի իր առաքելությունը, բարձր պահելով այդ պատմական Աթոռի համբավը և մեր Եկեղեցվո Սուրբ անունը այնտեղ: Մաղթում ենք, որ Թուրքիո հայ եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդը երկար, շատ երկար տարիներ վայելեն պայծառ ներկայությունը Պատրիարքական Աթոռի վրա Շնորհք Սրբազան արքեպիսկոպոսի:

Այդ հուպիչ առիթով, սիրելի Սրբական, ուզում եմ Ձեզ ներկայացնել մի հիշատակ՝ մի հովվապետական կոնքեռն, որպեսզի այն օգտագործեք երկարերկար տարիներ, երջանիկ հովվապետությամբ:

Այնուհետև Պատրիարք Սրբականը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իր հանդեպ ցուցաբերված հարգանքի ու գնահատանքի համար, և շնորհավորանքի խոսք ասաց Վեհափառ Հայրապետին՝ գահակալության 31-ամյակի առթիվ՝ անդրադառնալով Նորին Սրբության՝ Հայ Եկեղեցու մեջ կատարած անանխընթաց ազգօգուտ ու եկեղեցաշեն գործունեությանը:

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Վեհափառ Տեր, սիրեցյալ եղբայրներ և հավատացյալ ժողովուրդ հայոց:

Վեհափառ Հայրապետը խոր հուզում մը ապրեց՝ երթալով երեսունմեկ տարիներ առաջ, երբ առաջին անգամ ըլլալով ես եղա այս Մայր տաճարին մեջ, առաջին անգամ ես եղա մեր հայրենիքը և առաջին անգամ կոխեցի այս սուրբ և պատմական հողերը: Այդ օրերուն անշուք էր այս Տաճարը, այդ օրերուն այրի էր այս Աթոռը, այդ օրերուն անկարգ էր շրջապատը: Երեսունմեկ տարիներ անցան և ամեն ինչ իր տեղը գտավ: Այս տաճարը, սրբականագույն այս տաճարը պայծառացավ, նորոգվեցավ: Մենք փառք կուտանք ամենեն առաջ Աստուծո, որ երեսունմեկ տարիներ ետքը կրկին կկենանք այս հողին վրա, այս տաճարին մեջ՝ տարբեր իրադարձությամբ: Եվ Վեհափառ Հայրապետը իր հայրական խոսքերով և սրտաբուխ արտահայտություններով ցմեկ՝ Եկեղեցվո մեկ տրուպ պաշտոնյայի, մեծարեց այնքան անարժանապես: Ես երախտիք ունիմ, Վեհափառ Հայրապետ, Ձեր նկատմամբ այդ խոսքերուն համար, որ այստեղ ըրիք մեր անձին մասին: Եվ գիտեմ, թե այդ արտահայտությունները կերթան Եկեղեցիի շատ համեստ պաշտոնյայի մը որ ուրիշ ոչինչ ըրած է, եթե ոչ իր պարտականությունը կատարած է. կերթան նաև այն ժողովուրդին, որ վինքը գրեթե պատահական պայմաններու տակ ընտրած է իբր իր առաջնորդը և Պատրիարքը: Ամեն բան մեր մտքեն կանցներ, Վեհափառ Տեր և սիրելի ժողովուրդ, բայց երբեք ու երբեք մեր մտքեն չէր անցներ, որ օր մը կրնայի Պոլսո Պատրիարք ըլլալ: Աստծո ճանապարհները, Աստծո տնօրինությունները վեր են մեր ըմբռնումներեն, մեր ակնկալություններեն, և կարծես թե Աստված, որ վիս ոչնչացումե ազատած էր, բերավ այդ Աթոռին վրա, որպեսզի ինչ որ ինք ինձ վրա կատարեց, ես, նորա շնորհիվ, ուրիշ բազմահազար ժողովուրդին վրա կատարելու արժանի ըլլամ: Փառք կուտանք Աստուծո այն ամենին համար, ինչ որ իրագործվեցավ Թուրքիոյ Պատրիարքության մեր քսանհինգ տարիներու ընթացքին: Ոչինչ, գրեթե չնչին բան է դա, և եթե երբեք որևիցե գործունեություն ունեցանք, ինչ որ պարտ էինք ընել, այն միայն ըրինք: Ոչ մեկ բացառիկ բան, ոչ մեկ գնահատանքի արժանի բան, ու եթե երբեք այդ քիչն ալ ըրած չըլլայինք, բնականաբար մեղադրելի պիտի ըլլայինք: Հետևաբար փառք կուտանք Աստուծո և շնորհակալություն կհայտնենք, Վեհափառ Հայրապետ, այս առիթով՝ հայրական և սրտաբուխ խոսքերուն համար:

Այսօր, սակայն, սիրելի և հավատացյալ ժողովուրդ, ոչ այնչափ մեր գահակալության 25-ամյակին կանդրադառնանք, որչափ Վեհափառ Հայրապետի

գահակալության 31-րդ տարեդարձին: Ինք ակնարկեց, մենք հիշեցինք և ապրեցանք այդ պահը, երբ երեսունմեկ տարիներ առաջ այնքան հանդիսավոր իրադարձության և այնքան ցնծության և ուրախության մեջ ազգի կողմեն ընտրված Ազգային-Եկեղեցական ժողովը գրեթե միաձայնությամբ վինք կընտրեր կաթողիկոս Ամենայն Հայոց: Անցան երեսունմեկ տարիներ այն օրեն և, փառք նախախնամության, մեր ժողովուրդի ներկայացուցիչներուն ակնկալությունները արդարացան: Ուղիղ, շիտակ անձը ընտրած էին շիտակ պաշտոնին: Եվ մեր պատմության մեջ քիչ Հայրապետներ այնքան հսկայական գործ կատարած են Հայ Եկեղեցվո ֆիզիկական և նյութական վերականգնումին մեջ, որքան Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն սրբազնագույն կաթողիկոսը: Այս առիթով, Վեհափառ Տեր, մեր միտքը կուգա Աստվածաշնչական գեղեցիկ խոսք մը, ուր Սողոմոն Իմաստուն կըսե. «Մանուկ էի մտավարժ և հոգւոյ բարւոյ հանդիպեցայ»: Ուշիմ, խելացի մանուկ էի և արև հոգիի մը հանդիպեցա: Եվ կայն կնկատե գերագույն շնորհը, որ Աստուծմե որևէ մեկին կրնա տրվիլ, բարի հոգին: Եվ արդարև, Վեհափառն ալ նույնությամբ կրնա կրկնել Սողոմոն Իմաստունի այս խոսքը: Ինքն ալ եղած է մանուկ, մտավարժ, որ բարի հոգիի մը հանդիպեցավ: Եվ այդ բարի հոգին է, որ իր մեջ կերտած է այն բարի անձնավորությունը, այն սքանչելի նկարագիրը, որ մեր Հայրապետին նկարագիրը եղավ, որով ըրավ այն հսկայական գործերը: Մեր կրոնական կեդրոնը իր բնական և արժանի դիմագիծը գտավ: Ամենքս ալ, ամենուն սիրտերն ալ ցնծությամբ ու ուրախությամբ կլեցվեն, երբ Էջմիածին ոտք կդնենք: Նախ սա տաճարը՝ Աստուծո մեծագույն պարգևն է մեզի: Սա տաճարը բացառիկ տաճար մըն է, սիրելի և հավատացյալ ժողովուրդ: Քրիստոնեական Եկեղեցվո, ոչ միայն մեր Եկեղեցվո, այլ համայն Քրիստոնեական Եկեղեցվո առաջին տաճարն է, որ հողեն վեր շինված է, հողին երեսը շինված է: Ամենուս ծանոթ պիտի ըլլա պատմությունը, թե մեր հավատքի հայրը՝ սուրբ Լուսավորիչ, հայ ժողովուրդը դարձի բերելե ետքը, թագավորը, ժողովուրդը, բանակը, իշխանները մկրտելե ետքը պետք է շիներ առաջին քրիստոնեական տաճարը: Եվ ոչինչ գիտեր այդ մասին, ոչինչ տեսած էր ոչ մեկ տեղ: Եվ հետևաբար ապավինեցավ Աստուծո, ըսելու համար, թե Տեր, Դուն ցույց տուր մեզի այն տեղը և այն ձևը, որով կուզես, որ Քու տաճարդ կանգնի մեր հողին վրա, ցույց տուր մեզի, որ մենք կառուցանենք քրիստոնեական առաջին աղոթավայրը, պաշտամունքի վայրը: Եվ իր տեսիլքովը Գրիգոր Լուսավորիչ իջեցուց Աստուծո Միածինը այս անգամ այս նվիրական և սրբական հողերուն վրա: Աստուծո Միածինը, որ մարմնացած էր, մարդացած էր, ծնած էր Սուրբ Կույս Մարիամե և երկրի վրա շրջած էր բարիք գործելով, ճշմարտությունը քարոզելով, այդ նույն Աստուծո Միածին Որդին մեկ անգամվա համար իջավ տեսանելի կերպով այս հողին վրա, ցույց տվավ այն տեղը և ձևը, որով պետք է կառուցվի: Եվ այս տաճարը նախամայրը եղավ մեր բոլոր եկեղեցիներու: Եվ հետևաբար մենք ամենքս փառք պետք է տանք Աստուծո այս շնորհքին համար: Եվ մանավանդ մենք, որ արտասահմանեն կուգանք՝ այս տաճարին մեջ աղոթելու: Մենք մանավանդ Աստուծո փառք կուտանք, որ պարբերաբար, երբեմն-երբեմն կուգանք այս տաճարը, անոր հովանին մեր վրա, և այնտեղեն կստանանք մենք ներքին հոգեկան ուժեր, հոգեկան զորություններ: Հետևաբար, փառք կուտանք նախախնամության, այս տաճարին համար, այս սրբավայրին համար, որ դարերու ընթացքին միաժամանակ միության կեդրոնը եղած է համայն հայության: Այն հուսաբեռը եղած է, ուր ուղղված է հայությունը ամեն տեղե՝ արևելք կամ արևմուտք, հյուսիս կամ հարավ: Ամենքն ալ այս կողմը դարձած են և կայն նկատած են իրենց

միության կեդրոնը: Այսօր ալ այդ նպատակին պետք է ծառայե և կծառայե աս տաճարը, այս հաստատությունը՝ Հայոց Հայրապետությունը: Կրոնական գետնի վրա հաստատություն մըն է սա: Ավելի քան 1680 տարիներե ի վեր անիկա իր գոյությունը կպահե և հայ ժողովուրդին գոյության գլխավոր պատճառներեն մեկը եղած է: Այսօր ալ պետք է, որ ըլլա: Աշխարհի բոլոր կողմերեն մինչև իսկ սա պահուն եկած են հայ ժողովուրդին կավակները ուխտի, եկած են այսպես խառնվելու Երկրին մայր կանգվածին հետ, անոնց հետ շաղվելու կերպով մը, իրենց սրտակցությունը այդ ձևով վերանորոգելու և թարմացնելու համար և այդպես իրենց կգացումներեն մասնիկ մը այստեղ ձգած, վերադառնալու և շարունակելու իրենց պանդուխտի կյանքը: Մենք այս առիթով եկած ենք այնպիսի վայրե մը, որ արևմտահայության կեդրոնը եղած է: Ակնարկեց Վեհափառ Հայրապետը, թե անիկա ինչ կենսական դեր կատարած է արևմտահայ կյանքին մեջ: Միացուցած է կայն, միատարր կանգվածի մը վերածեր է, ստեղծեր է արևմտահայ մշակույթը: Այսօր փոքրիկ մնացորդ մը այնտեղ կա: Այնուհանդերձ անիկա իր արմատներու վրա է, դարավոր արմատներու վրա է և երկրին բնիկ տարրը կնկատե ինքզինք: Որչափ հավատարիմ է երկրի կարգ-կանոնին, օրենքներուն, նույնքան և ավելի հավատարիմ է իր դարավոր մշակույթին, իր Առաքելական Եկեղեցիին և իր հոգևոր կեդրոնին՝ Սուրբ Էջմիածնին: Մենք այդ ժողովուրդին, սիրելի հավատացյալ ժողովուրդ, ձեզի բերած ենք եղբայրական սեր և եղբայրական ողջույն: Եվ, բնականաբար, ինչ որ մենք այստեղ առինք՝ ձեր եղբայրական սերը և ողջույնը, կտանինք և կերպով մը կըլլանք կամար ու կամուրջ այս ժողովուրդին երկու կանգվածներուն միջև: Եվ եթե երբեք կեդրոնախույս ուժեր կան արտասահմանին մեջ, այդ ուժերը բնականաբար ապգի շահին, օգտին համար չէ, որ կաշխատին: Անհատական, եսասիրական նպատակներ կհետապնդեն և հայ ժողովուրդի ապագային տեսակետե, կրոնական տեսակետե, ապգային տեսակետե, մինչև իսկ մշակութային տեսակետե վնասակար գործ կկատարեն: Միության կեդրոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է համայն հայության համար: Ամենքս ալ, որ հորիզոնի տակ ալ ապրած ըլլանք, մեր բևեռները միշտ պիտի ուղղվին այս տեղը և այստեղ պիտի կապված ըլլանք մենք սրտով և հոգիով:

Ըսինք Վեհափառ Հայրապետի գահակալության երեսունմեկերորդ տարեդարձն է այսօր, և ինք իր բարությամբը, իր Աստվածատուր շնորհներովը աս ժողովուրդը իսկապես մխիթարեց և զորացուց: Կապերը արտասահմանին և Մայր Աթոռին միջև ավելի ամրացան, հարաբերությունները հայրենի պետության հետ արդյունավետ դարձան: Եվ այսպես կամաց-կամաց ժողովուրդը կգաց, թե ինք մեկ պետություն ունի, մեկ մշակույթ ունի, մեկ ցեղ ունի, մեկ լեզու ունի, մեկ արյուն ունի և պետականություն ունի: Այդ է, որ կմեզ ամենքըս կմիացնե, և մենք այս առթիվ պիտի փառք տանք Աստուծո, որ Վեհափառ Հայրապետը երեսունմեկ տարիներ գահակալեց այս Աթոռին վրա: Քիչերուն տրված է այս շնորհը մեր Եկեղեցվո մեծագործ Հայրապետներեն: Մեր աղոթքը այն է, որ Տերը շնորհե կայն մեզի երկար տարիներ, շատ ըլլա իր արևը կյանքի, շատ ըլլա իր զորությունը, շատ ըլլան իր Աստվածատուր շնորհները և անոնցմով շարունակե այն միացուցիչ դերը, որ այնքան ոգևին կուզե ինքը կատարել հակառակ կեդրոնախույս բոլոր ուժերուն: Վստահ ըլլանք, Վեհափառ Տեր, աղոթենք, հուսանք և հավատանք, թե օրին մեկը այդ միասնականությունը և միությունը պիտի իրականանա: Պետք է իրականանա այս կեդրոնին շուրջ՝ ամեն ոք դարձյալ իր ծիրին և շրջանակին մեջը իր դերը և իր կյանքը ապրելով: Թող Տերը պահապան և հովանի լիցի այս տաճարին և

հաստատության վրա: Թող անիկա երկար տարիներ, ինչպես դարեր ապրեցավ, այնպես ալ դարերով իր գոյությունը շարունակե, ըլլալու համար մեր հոգևոր կեդրոնը, ըլլալու համար աղբյուր շնորհաց, ըլլալու համար մանավանդ կեդրոն մը, ուրկե Հայրական սերը, Հայրապետական օրհնությունը կհեղու, կհոսի մեր համայնքներու բոլորին սիրտերու և հոգիներու մեջ: Թող անսասան մնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, թող Տերը իր Աթոռին վրա անշարժ պահե Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Տիրոջ աջը, մենք վստահ ենք, հովանի և պահապան է Մայր Հայրենիքին վրա, և այնտեղ ապրող ժողովուրդը կշարունակե ապրիլ այն կյանքով, որ սկսվեցավ Գրիգոր Լուսավորիչով, Տրդատ թագավորով դարերու ընթացքին: Կմաղթենք, որ երկար դարեր տակավին շարունակվի այդ Աստվածային աջը այս ժողովուրդի և հայրենիքի վրա: Եվ մեր հավատացյալ ժողովուրդը իր հավատքը, մեր հայրերու հավատքը անարատ պահե: Ոչ միայն Աստուծո կողմե ցույց տրված այս տաճարին մեջ մենք շարունակենք պաշտել իր սուրբ անունը, այլ նաև արժանանանք այն հավիտենական երանության, որ սահմանված է բոլոր արդար հոգիներուն, բոլոր հավատավոր հոգիներուն՝ շարունակելու համար փառավորել անունը ամենասուրբ Երրորդության, որ միջնորդյալ է հավիտյանս, ամեն:

Սուրբ պատարագի ավարտից հետո Մայր Աթոռի հյուրերն ու միաբանությունը Վեհափառ Հայրապետին թափորով առաջնորդեցին Վեհարան, որտեղ Սովետական Հայաստանի կառավարության անունից շնորհավորական խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը.

ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Սրբազան հայրեր, հարգելի հյուրեր,

Ինձ համար մեծ պատիվ է այսօր Սովետական Հայաստանի կառավարության անունից Ձերդ Սրբությանը բերել սրտագին շնորհավորանքի և լավագույն ցանկությունների այս խոսքը:

Մենք ուրախ ենք, որ Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդյան և գահակալության տարեդարձերը նշվում են Հայ Առաքելական Եկեղեցու Պոլսո Պատրիարք, մեծարգո Շնորհք Սրբազանի և արտասահմանյան թեմերի առաջնորդների ներկայությամբ և մասնակցությամբ:

Դա նոր վկայությունն է Էջմիածնի Մայր Աթոռի և նրա բազմավաստակ գահակալի նկատմամբ ավանդական սիրո և պատկառանքի այն անկեղծ զգացումի, որն ատաղձում է Հայաստանյայց Եկեղեցու միասնությունը և միակամությունը:

Արդեն 31 տարի է, ինչ Վեհափառ Հայրապետը իրեն հատուկ ջանասիրությամբ և կորովով, հմտությամբ և հայրենասիրական մղումով գլխավորում է բազմադարյան պատմություն և ավանդություններ ունեցող Հայ Եկեղեցու գործունեությունը:

Այդ ժամանակաշրջանը համընկնում է մեր սիրելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, գիտության և մշակույթի նոր աննախընթաց վերելքի և բարգավաճման եղելությանը:

Սովետական Միության եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում, նրանց անշահախնդիր օգնության և օժանդակության շնորհիվ, հայ-

րենաբնակ մեր ժողովուրդը կառուցում և կատարելագործում է իր ազգային պետականությունը, շենացնում իր սքանչելի երկիրը՝ իրականություն դարձնելով նախորդ բազմաթիվ սերունդների երազանքն ու բաղձանքը:

Հայ մարդը այսօր սեփական արժանապատվության առինքնող զգացումով, հպարտությամբ ու լավատեսորեն է ներկայանում աշխարհին: Նա իր ծաղկող Հայրենիքն ունի և ապավինում է Սովետական Մեծ տերության հզորությանը:

Անցած ժամանակաշրջանը էական տեղաշարժերով է նշանակալից նաև հայ Սփյուռքի տագնապներով ու մաքառումներով առլեցուն և ամենից առաջ դրանցով բնութագրվող առօրյայում:

Բարգավաճող Հայրենիքի երջանիկ իրողությունը նոր իմաստ է հաղորդել հայապահպանության ձեռնարկումներին: Հայրենիքի և Սփյուռքի ամրապնդվող կապերը, նրանց ներկայացուցիչների օրավուր ավելի հաճախակի դարձող փոխայցելությունները կենարար ավիշ են ներարկում ուժման խառնարանում դիմակայող սփյուռքահայության դալկացող երակներին:

Սփյուռքի հայությունը գնալով ավելի է համոզվում, որ Հայրենիքում է կուտակվում մեր ժողովրդի հավերժության խարիսխը և ավելի սերտորեն է համախմբվում Մայր Հայրենիքի շուրջը՝ նրա մեջ տեսնելով իր ազգային և հայրենասիրական իղձերի ու նպատակների ծանրակշիռ իրավատիրոջը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի 129 նախորդներից գրեթե ոչ մեկին չի վիճակվել վկա լինելու սեփական ժողովրդի ու Հայրենիքի այսպիսի տևական և անանխընթաց առաջադիմությանը, վերակերտումին և ապահովությանը:

Վեհափառ Հայրապետը, սակայն, սուկ վկան չի եղել այս հրաշալի իրողության: Նա բարձր գնահատանքի արժանի հայրենասիրական գործունեությամբ Հայաստանում թե Սփյուռքում իր նպաստն է բերել մասնավորապես Հայրենիքի և Սփյուռքի կապերի ամրապնդմանը, Հայաստանի շուրջ սփյուռքահայության համախմբմանը:

Լինելով խորապես իրատես ազգային դեմք, Վեհափառ Հայրապետը իր բազմաթիվ ուղերձներում և քարոզներում անկեղծ ներշնչանքով պաշտպանում է այն իսկապես ճշմարիտ գաղափարը, որ հայ ժողովրդի վերածնդի ուղին սկիզբ է առնում 1920 թվականի նոյեմբերից, որ նրա հետագա առաջընթացը և ազգային ապահովությունը հիմնավորապես խարսխված են այն սկզբունքների վրա, որոնք արդեն 66 տարի իմաստավորում են հայ ժողովրդի վերածնունդը և ստեղծարար հայրենաշինությունը:

Առանձնապես շեշտելի է Ամենայն Հայոց կաթողիկոսի բազմաբեղուն գործունեությունը ի նպաստ աշխարհի խաղաղության ամրապնդման:

Նա բազմիցս իր հեղինակավոր ձայնն է բարձրացրել ընդդեմ ջերմամիջուկային պատերազմի նախապատրաստության, հանուն այն բանի, որ ընդհանուր զինաթափման ճանապարհով պետությունները ուղիներ գտնեն խաղաղ գոյակցության և համագործակցության համար:

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը հաճախ է դեմ առ դեմ հանդիպել լինել թե չլինել երկընտրության մահաշունչ ահագնությանը:

Առաջին համաշխարհայինի կրակների մեջ հրացանակարկ եղավ մեր ժողովրդի կեսից ավելին:

Ղեկավարվելով համամարդկային մղումներով, Վեհափառ Հայրապետը խորապես հասկանալի անհանգստությամբ շեշտում է խաղաղության անհրաժեշտությունը հատկապես մեր ժողովրդի, նրա վերածնված հայրենիքի հա-

մար, որի աշխարհագրական դիրքը ճակատագրի տնօրինությամբ դժբախտաբար նույնքան անառիկ չէ, որքան անառիկ են նրա ժայռակոփ լեռները:

Մենք բարձր ենք գնահատում Ամենայն Հայոց կաթողիկոսի ակտիվ դիրքորոշումը խաղաղության ամրապնդման հարցում, նրա հեղինակավոր խոսքը ի պաշտպանություն Սովետական Միության խաղաղասիրական ձեռնարկումների:

Մենք գոհունակությամբ ենք ընդունում այն իրողությունը, որ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու արտասահմանյան թեմերի առաջնորդները և հոգևորականության կգալի մասը հայրենասիրության և խաղաղության արմատական հարցերում բաժանում են Ամենայն Հայոց կաթողիկոսի հայացքները և իրենց հնարավորությունների սահմաններում ջանում են նպաստել Հայրենիքի շուրջ մեր հարյուր հազարավոր հայրենակիցների համախմբման հայրենասիրական առաքելությանը և միևնույն համոզվածությամբ պաշտպան են կանգնում խաղաղության դատին:

Էջմիածինը բոլոր ժամանակներում իմաստավորել է Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու ավանդական միասնությունը: Այդ միասնությամբ և Էջմիածնով է Հայաստանյայց Եկեղեցին դիմակայել ճակատագրի փորձություններին, դիմացել ու գոյատևել դարեր ի վեր:

Այսօր, գաղութաշատ Սփյուռքի բազմաշերտ առանձնահատկությունների պայմաններում, Հայ Եկեղեցու միասնության անհրաժեշտությունը թերևս նույնքան կենսական է ու հրամայական, որքան կենսական ու հրամայական էր այն մեր պատմության ամենավտանգավոր կեռմաններում:

Սրտանց շնորհավորում եմ Հայաստանյայց Եկեղեցու ավագագույն և հարգարժան ներկայացուցիչին՝ Պոլսո Պատրիարք Շնորհք Սրբազանին, նրա գահակալության 25-ամյակի առթիվ:

Երևի պատահականություն չէ, որ հոբելյանական առաջին շնորհավորանքները Սրբազան Հայրը ընդունում է այստեղ, պատմական Էջմիածնի պատմությամբ իմաստավորված հողի վրա:

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք Ձեր ծննդյան և գահակալության տարեդարձի առիթով Ձեզ հղած շնորհավորանքներին միացնել նաև իմ բարի ցանկությունները և մաղթել Ձեզ երկար տարիների կյանք, երիտասարդական կորով, քաջառողջություն և հետագա բեղմնավոր գործունեություն Ձեր առաքելության ճանապարհին: